

ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՊԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԱՌՈՅԱՆ

Հայ ժողովրդի միջնադարյան պատմության վայրիվերումներն իրենց կնիքն են դրել այդ շրջափուլի մշակույթի և գրականության վրա: Ուսումնասիրողները բնականաբար դրանով են բացատրում բազմաթիվ պատմաքաղաքական ողբերի գոյությունը, որոնք ստեղծվեցին սեփական պետականության կորստյան հետևանքով: Այդ երևույթը բանաձևված է Վ. Տերյանի հայտնի տողերով.

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք,
Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ՝ ամեն գիրք:

Բայց այնուամենայնիվ կեղծ է այն պատկերացումը, թե միջնադարի հայ գրականությունը համատարած (և անհույս) ողբասացություն էր: Ընդհակառակն, ողբերի մեծագույն և լավագույն մասը գրված է ժողովրդին մխիթարելու, ոգեպնդելու, հայրենի երկրի ազատության ու ինքնուրույնության հույն անմար պահելու, հուսալատելու և ապագայի համար անձնուրաց ու եռանդուն գործունեության մղելու ձգտումով: Գա ոչ թե տարբեր անհատների պատահական ձգտում ու ցանկություն էր լոկ, այլ նաև տեսական պահանջ, որ կարելի էր հանդիպել հայ մատենագրության մեջ: «Ընդ ողբն պարտ է յուսոյն նուազն խառնել» — ասում էր Առաքել Սյունեցին (Ձեռ. ՄԱՄ 1100, թղ. 206ա): Հնարավոր է, որ սրա ակունքը ողբերգության մաքրագործող դերի արխատոսիայան դրույթը լինի: «Ողբերգականը արվեստում ոչ միայն չի բացասում, այլև ենթադրում է լավատեսական հայացք կյանքի նկատմամբ, — գրում է էդ. Զրբաշյանը: — Ողբերգական բովանդակություն ունեցող ստեղծագործության ընկալումը գրեթե միշտ պարունակում է երկու՝ արտաբուստ անհարիր թվացող կողմեր... Ողբերգության ծանր զգացումը «հաղթահարվում է» և, ինչպես ասում էր Արխատոսիլը, մենք «մաքրվում ենք» անմիջական ճնշող տպավորությունից: Գրա մեջ էլ հենց հանդես է գալիս ողբերգականի բարձր գեղագիտական, դաստիարակիչ նշանակությունը¹: Ողբերգականի այսպիսի ըմբռնումը միայն տեսական աշխատություններում չէ, որ արտահայտվել է: Նույնը տեսնում ենք և գործնականորեն կիրառված: Հանրահայտ է, որ պատմաքաղաքական ողբի լավագույն արտահայտությունը ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» քերթվածն է, և հետագա բոլոր հեղինակների համար սա եղել է ուղեցույց, ընդօրինակման առարկա, դպրոց: Հիշենք, թե ինչպես է վերջանում հայ գրականության սերկրորդ հրաշակերտությունը Նարեկից հետո» (Մ. Արեղյան): Բանաստեղծը հաճերթության նժարով է կշռում ժամանակը, երկրի ու ժողովրդի ճակատագիրը դիտարկելով նրա երեք շափումներով. գեղեցիկ էր անցյալը, ներկան՝ անհրապույր, իսկ ապագան խոտանելում էր լինել տալիս գեղեցիկ, քան նույնիսկ փառավոր անցյալը:

Շնորհալին հայրդրիներին հորդորում էր շրնկնվել, դիմակայել շարին ու շարիքին և մտածել ապագայի մասին: Անգործուն կյանքը, նկուն տրամադրությունը կործանարար կլինեին ոչ միայն յուրաքանչյուր անհատի համար, այլև՝ հայրենիքի: Եվ նա ոչ թե քրիստոնեական գաղափարախոսության անձուկ սահմաններում երկնային մխիթարություն էր կանխատեսում տառապյալ ժողովրդին, այլ հորդորում էր տոկալ շարչարանքներին, հավատալ, որ փրկությունն այս կյանքում է լինելու, հարկավոր է այլուով սպասել այսր կենացը²: Բանաստեղծը քանիցս

¹ էդ. Զրբաշյան, Գրականության տեսություն, Եր., 1972, էջ 93—94:

² Հմմտ. Ա. Հովհաննիսյան, Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., 1957, էջ 268:

կրկնում է, որ «Ողբ Եղեսիոյն» գրում է հայրենակիցներին (գուցե նաև ասենք՝ հավատակիցներին) մխիթարելու համար³։

Ոչ միայն գեղեցիկ, այլև ոգևորիչ է «Ահա սակաւ ինչ ժամանակ» տողով սկսվող հայտնի հատվածը (տե՛ս 127 և հաջորդ էջերը)։ Եվ պատահական չէ, որ այստեղ Ա՛ս մի անգամ մեծ մտածողն ու բանաստեղծը առաջադրում է երիտասարդության հոգեֆիզիկական համակողմանիներդաշնակ զարգացման պահանջը, հիշելով իր եղբորորդի Ապիրատին, որ

Մանուկ տղա գոյով տիպ
և կատարեալ յիմաստ գրաց,
Ներհմտացեալ յարհեստ զինուց,
բստ հրանհանգին Հոռմայեցուց։
Գոյ աչոզակ ի նուս ձիաց,
որպէս օրէն է վարժելուց։ (137—138)

Պակաս ուշադրով հանգամանք չէ այն, որ քերթվածում կարևոր տեղ է տրվել ռազմական գործողություններին։ Հերոսական պայքարի, դիմադրության համանման գրվագներ կարելի է մատնանշել և այլ ստեղծագործություններում։ Եվ դա բավական է, որ նկատի ունենալով լավագույն ողբերը, արձանագրենք, թե այդ գրական տեսակի կիրառվել է առավելաբար ժողովրդին մխիթարելու և հույսի սերմեր ցանելու միտումով։ Բայց, շիտակով միջնադարի հայ բանաստեղծների ստեղծած կենսուրախ երգերի (ասենք, հայրենիների) մասին, պետք է շեշտել, որ մեզանում հորինվել են նաև հատկապես հերոսական վիպերգություններ։

Ինչպես բանաստեղծական արվեստի շատ տեսակների, նույնպես և հերոսական վիպերգության կամ վիպասքի սկզբնավորության պատիվը հայ գրականության մեջ պատկանում է Ներսես Շնորհալուն։ Դա փաստորեն կիլիկյան հայկական թագավորության ստեղծման գաղափարական նախապատրաստությանն է վերաբերում։ Անշուշտ, հայ բանաստեղծներին նույնանման առիթ կարող էին ընձեռել և Բագրատունյաց և մյուս հարստությունների հաջողությունները, և հնարավոր է, որ անիական մշակույթը ունեցած լինելը իր հերոսական-հայրենասիրական վիպերգությունը։ Բայց դժբախտաբար Անիի գրականությունն այսօր շատ քիչ անուններով ու գործերով է ներկայանում։ Արդյոք շա՛տ են պահպանված ճարտարպետական հուշարձանները։

Վիպաքերթվածի առաջնեկն, ուրեմն, Շնորհալու Վիպասանությունն է՝ «Շարագրութիւն հոմերական վիպասանութեամբ սակա Հայկազանցն սեռի և Արշակունեացն զարմի՛ ի սկզբանցն մինչ ի վախճան, առասացեալ Ներսէսի՛ յիւրական նախնիս, ի համբակութեան ելով տիսա՛, որից արգեն ենթադրելի է, որ գործը շափածո է և պատմողական տարրն է գերակշիռ։ Երկու հանգամանք վճռական կարևորություն են ունեցել քերթվածի հորինման հարցում։ Առաջինը կորցրած հայրենիքի և վերացած պետականության ցավն էր։ Շնորհալին հայության ազգային երազանքների ու նկրտումների արտահայտիչն էր, ավելին՝ կազմակերպիչ։ Նա ձգտում էր հայ երիտասարդության պատրաստել հայրենի պետականության վերականգնման համար և հասկանում էր, որ նրան ոչ միայն բարոյական դասեր էին հարկավոր, այլև՝ կոփվածք, մարզանք, զինական պատրաստակություն։ Այստեղ է, ահա, որ բանաստեղծին օգնություն են գալիս հայոց պատմության հերոսական դեմքերը՝ Հայկ Նահապետից մինչև Մեծն Տիգրան և Արշակ Բ։ Եվ մարզու ֆիզիկական հնարավորությունները, ուժը, թերևս առաջին անգամ Ե—է զդ. պատմագրությունից ու Դավթակ Քերթողից հետո, փառաբանել է Շնորհալին։ Այստեղ նա խոստանում է գրել իր նախնիների պատմությունը՝ ըստ կարգի, ինչպես որ կա, առանց ավելացնելու կամ զունազարդելու, առանց պակասեցնելու, միանգամայն հստակ գիտակցելով այդ գործի դաստիարակչական նշանակությունը, որպեսզի լավին հետևեն և զգուշանան մերժելիքի։

Վիպասքի նախերգանքը, այսպիսով, պարզում է հեղինակի ծրագիրը։ Պատմությունն սկսվում է արարչագործությունից, և գործողությունները շափազանց արագ են ընթանում։ Դողթան երգերից նա սովորում է « Արտաշեսի ու Սաթենիկի (56) և Արտավազդի (57) առասպելները՝ նույնպես սրբնթաց խոսքով, և սա մտածել է տալիս, որ բանաստեղծի երկը հասցեագրված է

³ Տե՛ս, օրինակ, Ներսէս Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, Քննական բնագիր, բանասիրական դիտազույթություններ, ծանոթագրություններ Մանիկ Մկրտչյանի, Եր., 1973, էջ 126, 134, 135, 137, 138 և այլն։

⁴ Տե՛ս Ներսէս Շնորհալի, Բանք շափաւ, Վնեստիկ, 1830, էջ 494—559; Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, Քննական բնագիրը պատրաստեց, ծանոթագրեց և յառաջարանք գրեց Մ. Մըկրտչյան, Եր., 1981; Օգտվում ենք այս հրատարակությունից։

ոչ թե հայոց պատմութիւնն անտեղյակ ընթերցողի, այլ բավականաչափ ծանոթութիւն ու գիտանք ունեցողներին: Համառոտ ու թուցիկ բնութագրութիւններն են ստացել գրեթէ բոլոր հերոսները, բայց հանգամանորեն հեղինակը կանգ է առնում Տրդատի, նրա թագավորութեան շրջանի պատմութեան վրա: Տրդատը կոչվում է Նոր Հերակլ, որովհետեւ պայքարում էր բարբարոս ցեղերի դէմ: Այս հերոսութիւնն ու քաջութիւնն է, որ գեահատում է նրա մեջ Ենորհալին: Տրդատը շահեկանորեն տարբերվում է ուրիշներից. լինելով ոչ պակաս զորեղ, իր նախնիների համեմատութեամբ: Դա պատահական չէ. Տրդատի ժամանակ տեղի է ունեցել, բանաստեղծի ըմբռնմամբ, հայ ժողովրդի դարավոր պատմութեան առաջին մեծ հեղաբեկումը՝ ժողովուրդն ընդունել է քրիստոնեութիւն: 288 (կամ 301)⁵ թ. նա քրիստոնեութիւնը պետական կրոն հռչակեց Հայաստանում, որը շրջադարձ էր ժողովրդի կյանքում:

Մեսրոպ Մաշտոցի ժամանակին, մաշտոցյան մշակութային շարժումը ևս մեծ կարևորութիւն է տվել բանաստեղծը: Մաշտոցը Գրիգոր Պարթևից հետո երկրորդ լուսավորիչ էր, որ գրեթէ ստեղծեց հայ ժողովրդի համար, վերջնականապէս խզել տալով կապերը հին, հեթանոսական մշակույթի հետ: Մաշտոցը, սակայն, չի բավարարվել հարազատ ժողովրդին լուսավորելով, գրեթէ ստեղծել նաև հարևան ժողովուրդների համար:

Առանձին սիրով Ենորհալին անդրադառնում է Բագրատունիների թագավորութեան շրջանին, պատմում, թե հայ ժողովուրդը ռոգի և շունչ է առել վերահաստատելու հայրենի պետականութիւնը: Բայց շուտով ինչ-որ հեռու անապատներից քսանչորս բարբարոս ցեղ ներխուժում են Հայոց աշխարհը, և՛

Տոհմ, որ թագի փառաւորեալ,
Անաբանից ստրուկ եղեալ: (107)

Ներսես Ենորհալին Վիպասանութեան մեջ քիչ է օգտվում գեղարվեստական միջոցների գիտանոցից, կարելի է երբեմն փոխաբերութիւնների ու համեմատութիւնների հանդիպել, մեկ դիպուկ մակդիրով կամ ներագծով նա բնութագրում է տվյալ գործին ու արագ անցնում հաջորդին: Այնուամենայնիվ, առանձին գործիչների նվիրված հատվածները հարաբերական ինքնուրույնութիւն ունեն, և բնական է, որ հաճախ ձեռագրերում պատահում են իբրև առանձին, ինքնուրույն բանաստեղծութիւն՝ Արտաշես Աշխարհակալին վերաբերող հատվածն, օրինակ, 17 տող է, ուր համառոտակի հիշելով նրա գործերը, հեղինակը աշխարհակալ թագավորին համեմատում է Ալեքսանդր Մակեդոնացու հետ, նկատելով, թե Արտաշեսն ավելի վճճ է (էջ 48):

Բանաստեղծի ամեն մի խոսքը դաստիարակչական միտումով էր լիցքավորված: Այդ ամենը նա անում էր ժամանակի պայմաններից ելնելով և ներկան հակադրելով փառավոր անցյալին, «ի հոգի և ի մարմին խայտալոյ մերասեռ ընթերցասիրաց», ինչպես կասեին Մեսրոպ Վայոցձորեցու «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթևի» երկի մագրասյան հրատարակիչները:

Հայրենիքը պանծացնելու գործում մեծ է նաև մշակույթի դերը: Տեսանք, որ բանաստեղծը կարևոր տեղ է հատկացրել Մեսրոպ Մաշտոցին: Այստեղ փառաբանվում են նաև մյուս թարգմանիչներն ու մշակութային գործիչները: Թշուպն հայրենի հերոսները համեմատվում էին հույն հերոսներին և շատ անգամ ավելի քաջ ու վճճ էին նրանցից, այդպես ոսկեդարյան մատենագիրները՝ Մովսես Խորենացին, Գալիթ Անհաղթը և իրենց ընկերները՝

Ա՛յնքան շնորհօք վերին լրցեալ,
Մինչ զի յունաց գերագանցեալ: (97)

Վիպասանութիւնը բնութագրվում է ծրագրի, վիժարի ընդգրկման և համեմատաբար փոքր ծավալի հակասութեամբ: Սրա պատճառը հեղինակի անփորձութիւնն էր, իսկ հետևանքն այն եղավ, որ Ենորհալու հերոսներից շատ-շատերը կերպար չեն դարձել, անկենդան են: Երիտասարդ հեղինակը ոչ այնքան պատկերում-ներկայացնում է նրանց գործողութեան մեջ, որքան փառաբանում է հայրենաշէն գործերի համար՝ զորականի բաղուկն ու սիրանքը, գիտնականի միտքը: Նույնցեր նրանց կերպարները՝ ընդամենը մի քանի գիծ, մի քանի տող: Եվ այդ ամենը շափազանց մեծ ժամանակային ընդգրկումով: Զկա ամբակուռ կառույց, որովհետև պատմվող դիպա-

⁵ Տե՛ս Ն. Ազոնց, Հայաստանի պատմութիւն. Ակունքները— X—VI գլ. մ. թ. ա. Հայերի ծագումը. Հողվածներ, Երևան, 1972, էջ 381:

⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Քոչկերյան, Ներսես Ենորհալու նորահայտ տաղերի և հատված-տաղերի մասին. «Ներսես Ենորհալի» (Հողվածների ժողովածու), Եր., 1977, էջ 130—156. Ներսէս Ենորհալի, Վիպասանութիւն, Մ. Մկրտչյանի առաջաբանը, էջ 14—15:

շարը միասնական-ամբողջ սյուն չի դառնում: Իսկ դա ենթատեսակի կարևորագույն պահանջներին մեկի անտեսումն է:

Վիպագրերթվածում չկան նաև գեղարվեստական ընդհանրացումներ, պատկերները կտրտված են, իրար հետ քիչ կապվող, շամակարգված: Դա անսպասելի չէր, և Վիպասանությունը մեծ դառ եղավ հեղինակին: Հետագայում գրած «Յիսուս Որդին» Շնորհալին նվիրեց միայն մեկ հեղուկ, «Ողբ Եղեախոյն»՝ մի քանի կերպարների բացահայտմանը: Այս առումով Վիպասանությունը կրկնում էր Գրիգոր Մազիստրոսի սխալը, բայց անհամեմատ բարձր էր նրա «Հազարտողեանից», ուներ բավաբերիվ արժանիքներ: Սակայն անհետաքրքիր չէ, որ նրան ժամանակակից եվրոպայում ևս բավական տարածված էր չափածո պատմությունը և ուներ միևնույն թերությունները:

Այնուամենայնիվ, Ներսես Շնորհալու երախայրիքը ավելի շատ և մեծ արժանիքներ ունի Գրանցից առաջինը թերևս դարավոր ավանդության հաղթահարումն էր, քերթվածի բերած հզոր աշխարհիկ շունչը: Դավթակի Ողբի նման հատուկենտ երևույթները, որ կարելի է ասել՝ պատահականորեն են պահպանվել, առանձին դեր չխաղացին մշակույթի աշխարհականացման գործընթացում. այդ դերը Շնորհալուն էր վերապահված: Վիպասանությունը մեծ նորություն էր որպես պատմական նյութի հիման վրա գրված պոեմ: Նյութով է պայմանավորվել նաև գրվածքի բնույթը, որ հեղինակը վերնագրում նշել է «Վիպասանություն» բառով: Դա հուշում է, որ գեղարվեստը վիպական, պատմողական տարրն է:

Ներսես Շնորհալին ստեղծեց հայոց քերթողական պատմությունը, մի ենթատեսակ, որ հետագայում, նրա մյուս գործերի նման, հետևորդներ պիտի ունենար: Բայց, ի տարբերություն մյուսների, Վիպասանությունը ավելի բարենպաստ պայմանների արգասիք է, և պատահական չէ, որ սրա հետևորդները գլխավորապես Կիլիկիայի մտավորականները եղան:

1196 և 1198 թթ. թագ ստանալով նախ քյուզանդական, ապա՝ գերմանական կայսրերից, Լևոն Երկրորդը հիմնեց Կիլիկիայի հայոց թագավորությունը, և տեսնական առաջադիմությանը զուգընթաց, նոր թափով ու շքեղությամբ զարգացավ հայ մշակույթը իր բոլոր ճյուղերով՝ շնորհիվ ստեղծված նպաստավոր պայմանների: Այս հաջողությունները չէին կարող վրիպել մտավորականության նշադրությունից: Եվ թողնուհետև Գրիգոր Տղան 1189 թ. գրեց «Ման ողբերգական վասն առման Երուսաղէմի» քերթվածը, որ չդիմանալով գայթակրությանը, մի կողմ թողնելով ողբերգական նվագը, փառաբանեց Լևոնին: Սա բոս էություն մի համառոտ վիպասանություն է, որտեղ ողբասացը թեթևացած շունչ է քաշում ուրախառիթ պատմությունը շարադրելով: Հայ մարտիկները «հրաշազան գործեր» են կատարում, ոչ ոք ավարի ու կողոպուտի մասին չի մտածում, որովհետև նրանք մի նպատակ ունեն՝ «միայն ի սուր մաշել» թշնամիներին⁷, և մահճեղականների տոնը սուգի է վերածվում: Դառնությունների բաժակը, որ ըմպել էին տալիս հազարացիք ջրիստոնյաներին, Լևոնը մատուցում է հենց նրանց: Այս կապակցությամբ երկու անգամ հիշվում է Ալեքսանդր Մակեդոնացին, հիշվում են Հայկ Նահապետը, Արտաշես, Տիգրան, Տրդատ թագավորները:

Ներսես Շնորհալու հետևորդությամբ վիպասք է գրում նաև Վահրամ Բարունին: Բայց եթե Շնորհալին անհրաժեշտ էր համարում Վիպասանության մեջ ներկայացնելու անցյալի և՛ լավ, և՛ վատ գործերը, որպեսզի մանուկ ընթերցողը նաև տեսնի, թե ի՞նչ չի կարելի անել, Բարունին, հետևելով հանդերձ իր մեծ նախորդին, փոխում է սկզբունքը: Ընդհատ է, նրա քերթվածի խորագրում չկա վիպասանություն բառը, բայց Պատմության մեջ նա ոչ միայն օգտագործում է այն, այլև ենթատեսակի իր բմբունումը ճանաչելու, սահմանելու բանալի է տալիս:

Նախադրության մեջ նա ասում է, որ Ներսես Շնորհալին որպես խրատ «հանուրց ազգի» չափաբերել է հայոց պատմությունը՝ հնազույն նախնիներից մինչև իր սերունդը: Լևոն Գ արքան, ընթերցելով Շնորհալու Վիպասանությունը, հորդորել է Բարունին շարադրանքը շարունակել տալիս, որ հասել էր «սուրբ հայրը»⁸:

Բարունին խոստանում է օգտվել «ստուգագույն» աղբյուրներից, հաղորդել վստահելի անդեկություններ և վիպասանել նահապետների գործերն ու խոսքերը: Մեր ընդգծած բառը վերցնելով Շնորհալուց, Բարունին նույն իմաստով է գործածում այն: Հարցի պատասխանը նա տալիս է անազղակիրորեն, 1271 թ. հունվարի 6-ին Տարսուսում Լևոն Գ թագավորի օժան հանդեսությունների ժամանակ արտասանած ճառում. «... զի գորս վիպասան է ի թագաւորացն, առէ... և զորս

⁷ Տե՛ս Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, էջ 303—308, Համեմատության համար հիշեցրեք, որ թե՛ արևելյան, թե՛ արևմտյան գրականություններում ռազմական կողոպուտը նույնպես քաղաքի վկայություն էր:

⁸ «Վահրամայ Բարունայ Ուտանաւոր պատմութիւն Ռուբինեանց»՝ հետևյալ գրքում. «Տարեցիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, ՌԻԸ—1859, էջ 186:

բարոյականութեան կանոններով շեշտում է իր անկարող և անարժան լինելը, հետո մտածում է, որ իր շարահարութունից ներսես Շնորհալու երկը չի տուժի, չի կորցնի փայլը: Հետևելով Շնորհալուն, Բարունին գրում է նույն ութվանկանի ոտանավորով ու Եւլ հանգարով Այդ հանգամանքը իր հետ բերել է և որիչ ընդհանրութուններ. այստեղ ևս, ինչպես Շնորհալու քերթվածում, խոսքի հիմնական, տիրապետող տարրը բայն է, ուստի գործողութունները արագ զարգացում ունեն: Գրանով Վիպասանութունից Ուտանավոր պատմութեանն է անցնում եսև բանաստեղծական խոսքի շարժանութունը: Մյուս կողմից դա նպաստում է խոսքի հակիրճութեանը: Բայց եթէ Շնորհալին հարյուրամյակների պատմութունն ամփոփել էր մի բանի էրում, ապա Բարունին գրեթէ նույն ծավալի մեջ շարադրում է միայն Ռուրիկյան հարստութեան պատմութունը, այսինքն՝ ավելի փոքր ժամանակաշրջան է ընդգրկում, հետեաբար կարելի էր ավելի հանգամանորեն ներկայացնել հերոսներին, գործողութունները պակաս սրբնթաց կարող էին լինել (և են): Մյուսին ավելի ամփոփ ու կուռ է, և հեղինակը հնարավորութուն ունի ավելի լայնորեն օգտվելու գեղարվեստական միջոցներից ու հնարանքներից, պատկերն առավել ամբողջական և ավարտուն դարձնելու: Այդպիսի ամբողջական կտորներ են Գագիկ Բագրատունու (1042—1045), Քորոս Առաչինի (1100—1129), Լևոն Առաչինի (1129—1137) վերաբերյալ հատվածները: Գեղարվեստական հաջողված կտոր է իրական հիմք ունեցող այն միջադեպը, երբ Քորոսը հույն գերի սևաստոսներին ազատ է արձակում փրկագնի դիմաց և ոսկին բաժանում է հուսկակ զորականներին: Այս առթիվ սևաստոսները զարմանք են արտահայտում, և Քորոսը բացատրում է.

Քէ՛ — Աի ըզձեզ դարձեալ կալեալ
Ըզևաստոսդ աձցեև կապեալ:— (204—205)

Առհասարակ պիտի նկատել, որ տրամախոսութունները կենդանութուն են տալիս հեղինակի խոսքին, նպաստում գեղարվեստական որակի բարձրացմանը: Այս հարցում Բարունին բավական շահում է Շնորհալու Վիպասանութեան համեմատութեամբ:

Վահրամ Բարունին սիրով է ներկայացնում հայ զենքի ու բազկի հաջողութունները և, ինչպես ինքը կասեր՝ դրախտային կյանքը: Հիշենք Լևոն Բ թագավորին վերաբերող հատվածը: Նա թշնամական բուր գեղերին հաղթելուց հետո բազմաթիվ ամրոցներ ու ղզյակներ է կառուցում, ավելի շնանցնում երկիրը:

Սակայն Բարունին պատմում է մեծ մասամբ իր ժամանակի անցուդարձերը, լավատեղյակ է այդ ամենին: Հատկապես կարևոր են Լևոն Գ արքային նվիրված էջերը: Եթէ, ինչպես տեսանք, Օծման ճառն ուղղված էր մեծ իրադարձության հանդիսականներին և արտասանվում էր թագավորի ներկայությամբ, հարմար չէր այնտեղ թագավորին գովերգելը (եթե՛ն լուրի է, զի մի՛ թուեցայց մարդահաճութեամբ իմն առ ականէ խաւսելք. Ե, 100), ապա Ուտանավոր պատմութունը գրվում էր սերունդների, դարերի համար, ուստի և կարելի էր այնտեղ թագավորին փառաբանել ազատորեն, մանավանդ որ լիպպես արժանի էր: Եվ Բարունին ակնառու տեղ է հատկացրել Լևոն Երրորդին, ըստ երևույթին ոչ թե լուր այն պատճառով, որ իր պատվիրաատուն էր, այլ՝ որ ավելի հեշտ էր սեփական աչքով տեսածը, գիտցածը արձանագրելը: Պատահական չէ, որ Լևոն Գ վիպերգութեան ամենակենդանի կերպարն է: Բարունին ամենօրյա շփումով գիտե թագավորին. դա կարևորագույն հանգամանք է:

Հատկանշական է, որ այս արքայի մասին խոսելիս նույնպես հեղինակը օգտագործում է անցյալ ժամանակը: Իհարկե, սա չի նշանակում, թե այդ էջերը գրված են Լևոնի մահից հետո: Սակայն առնվազն երկու բացատրութուն կարող է ունենալ այս պարագան: Նախ, վիպական պատմի ժամանակը հենց անցյալն է, ներկան կարծես կհասարակացներ խոսքը: Վերջինս դարձյալ կհնչեր որպես հաճոխախոսութուն, որից Վահրամ Բարունին զգուշանում էր: Երկրորդ, ամբողջ քերթվածի պատմումը անցյալ ժամանակով է, և հարմար չէր լինի այլ կերպ վարվել, մանավանդ որ Եւլ հանգը ևս այդ էր պարտադրում: Վերջապես, չէ՛ որ հեղինակի խոսքն ուղղված էր գալիք սերունդներին:

Վահրամ Բարունին ոգևորութեամբ հիշում է Լևոնի զինական հաջողութունները: Երբ հայոց արքան հաղթում է Գամիրքի թուրքերին, հարևան ժողովուրդները, թագավոր թե նպատակ՝

Նղեն ամիշեալ և զարմացեալ,
Խաղաղութիւն ընդ մեզ առքեալ: (236)

Լևոն Գ, որ Մեծագործ էր կոչվում, նաև մեծահոգի է. չի հիշում նրանց գործած չարքերը և ներում է «ի բուր սրտէ», սիրով կապվում նրանց հետ: Նա մի հերոս է, որին փարձանքները չեն կարող ընկճել, և որն իր մեծագործութուններից չի մեծամտում, գտառական:

Անոն ոչ միայն ինքն է աննկուն, անսասան, այլև հուսադրում, հանգստացնում է ուրիշներին: Մթափ մտածող, «երկայնամիտ և ժովկայիւլ» է նա, պարկեշտ, ներողամիտ, հյուրասեր ու առատաձեռն, բարեպաշտ մի մարդ, այլև՝ «քաղցրատեսիլ», մի խոսքով, ըստ ամենայնի կատարյալ անհատ, որ լիովին համապատասխանում է Օծման ճառում Բարունու գծած՝ թագավորի գաղափարատիպին: Երիտասարդ Անոնին մեծ դժվարությամբ են համոզում, որ թագավոր օժվի: Եվ Անոն Գ բարեպաշտությամբ նույնիսկ գերազանցում է իր նախնիներին, առավել շենացնում երկիրը, մեծ պատիվներ, պարգևներ է տալիս ուսումնականներին, ավելացնում զորքի աշխատավարձը: Նրան բնութագրելուց հետո հեղինակը հիշում է արքայի երեք որդիներին, թագուհուն: Այստեղ հատկապես ուշադրով է ավագ որդու՝ Հեթումի (հետագայում թագավոր—1289—1301) մասին Բարունու նկատումը.

Ջայն, որ յիմատ գրոց կրքեալ
Եւ ի մառտից գործս վարժեալ... (236)

Արքայազնը ստացել է հենց այնպիսի կրթություն, որի պահանջը արտահայտել էր տարբեր առիթներով Ներսես Շնորհալիին (հրիտաւարդութիան հոգեֆիզիկական բազմակողմանի զարգացման պահանջը):

Անոն Գ թագավորին նվիրված հատվածով փաստորեն ավարտվում է Ոտանավոր պատմությունը: Եարունակությունը փոփոխական հանգով է և հիշատակարանի հանգամանք ունի: Անոնի թագավորության շրջանում մշտապես խաղաղ ու անվերջով չի եղել հայ ժողովրդի կյանքը (հասկանալի է, խոսքը Կիլիկիային է վերաբերում), բայց հեղինակը գրում է վիպասանություն, մի ենթատեսակ, որին իր պատկերացմամբ անհարիր են մտայն գույները, բացառվում են, ուստի Բարունին այդ մոայլը բաց է թողնում բուն քերթվածում, և սակայն չի կարող անտեսել, մոռացության մատնել, իբր թե չի եղել: Եվ նա դրան անդրադառնում է առանձին, անկախ հատվածի մեջ, շմոռնայով նաև ավանդական պարզաբանումը, թե ինչն է դժբախտությունների պատճառը: Բայց այստեղ նոր բացատրություններ ունի իմաստասեր քերթողը: Ոմանք տարակուսանքով են նայում այդ հարցին.

Ասեն՝ Ջիա՞րդ է ճշմարտեալ
Այս դատաստան, որ մեզ հասեալ,
Մի՛թէ միայն մեք մեզուցեալ,
Քան զոր յեկրի են քեակեալ...
Կամ թէ տաճիկն արդար եղեալ,
Յորոց ի ձեռըն մեք մատեեալ... (238)

Բարունին այսպես է պարզաբանում.

Այս փոխարեն չարեաց իճշ չէ,
Կամ հատուցումն առ ի տեսնէէ,
Այլ որ ոք ոչ ապաշխարէ՝
Ջըմանագոյնսն այսրմ կրէէ,
Քանզի խրատէ տէ՛ր՝ զոր սիրէ,
Ջընդունելի՛ գորդին տանջէ: (238—239)

Աստված, ուրեմն, խրատում է նրան, ում սիրում է: Սա համեմատելի է հատկապես Ներսես Շնորհալու նույն կարգի բացատրություններին: Բարունին ուսուցանում է, որ միայն հավատ ունենալը թիչ է, պետք է բարի գործերը միավորել, համատեղել հավատի հետ, որովհետև հավատը մեռած է, եթե ունայն է, թափուր՝ բարի գործերից:

Վահրամ Բարունին գրում էր Շնորհալու Վիպասանության շարունակությունը, ուստի աշխատել է նրան հարազատ մնալ փոքր, երկրորդական հարցերում ևս: Նրա դարձվածները, կապող խոսքերը օգտագործում է և Բարունին, որ կարծես աշխատում է լեզվական ատաղձով չհեռանալ Շնորհալուց:

Ներսես Շնորհալու Վիպասանության հետ նույնանման կապ ունեն նաև Հեթում Բ թագավորի և Սմբատ Սպարապետի քերթվածները¹⁰, ըստ էության Հեթումն իր հերթին շարունակել է Վահրամ Բարունուն:

¹⁰ «Արարատ», 1869, էջ 39. «Ոտանաւոր բարեպաշտի թագաւորին Հայոց Հեթումյ Բ»: Սըմբատի համար տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 71—72:

Հեթում թագավորը օծոված մատենագիր է. ձևական հարցերում նա ինքնուրույն է, ճաշակ է դրսևորում, հրաժարվել է նույնհանգուսթյունից, գրել զուգահեռ հանգերով: Այս հանգամանքը դրականարար է ազդել որակին: Քերթվածի գրության շարժառիթը Հեթումի պատվիրած Աստվածաշունչն էր. փաստորեն դա հիշատակարանին է փոխարինում (գրված է 1295 թ.): Բայց մի շնչով գրված այս ոտանավորը անպայման կարող գրչի արտադրութուն է: Հիշենք թեկուզ, որ Ռուբինյանների անվանադրի՝ հայրենի երկրից հեռանալը և Կիլիկիայում հաստատվելը նա համեմատում է Նոյի ուղևորության հետ, և դա շատ խոսուն է:

Հեթում Բ չափազանց համառոտ հիշում է Ռուբինյանների պատմութունը, որ Վահրամ Բարունին արել էր հանգամանորեն: Հեթումը հպարտությամբ է խոսում իր հոր՝ Լևոն Գ թագավորի զահակալության մասին և անմիջապես խոստովանում, որ իր օրոք արհավիրքները շատացել են, և բանաստեղծի խոսքը դառնանում է, հիշեցնելով «Ողբ Եղևսիոյն».

Ասեմ ըզկայն Հոսմայական,
Ջհայրապետաց մեր երստարան,
Ջար և յիշելն է ողբալի,
Աղէտ, կրսկիծ, ճառ դողալի: (40)

Հեթում թագավորը հանգամանորեն անդրադառնում է Զատկի տոնին վերաբերող վեճերին, որոնց ինքը վճռական, եռանդազին մասնակցութուն է ցուցաբերել: Իրոք, Լևոն Երրորդի մեծագործութուններից հետո՝ կրոնական-դավանաբանական հարց: Ճիշտ է, ըստ էության այդ հարցը կրոնականից քաղաքականի էր վերածել և սկզբունքային նշանակութուն ձեռք բերել: Համենայն դեպս եկեղեցիների միության խնդրի հետ կապված հարցերը հարևան մասնեղական իշխանութունները ևս դիտում էին իբրև կարևորագույն քաղաքական խնդիր: Պատահական չէր 1307 թ. Ասի ժողովի որոշման՝ նրանց արձագանքը: Այդ որոշումը արար և սելջուկ տիրակալները համարեցին հրավեր խաչակիրներին՝ արշավելու Արևելք:

Հեթումի քերթության տրամադրութունը տեսնում ենք նաև Ամբաստանապետի չափածո հիշատակարանում, որ նույնպես գրված է ութ վանկանի ոտանավորով.

Սկիզբն էր ի չար ժամանակի,
Երբ Մարցին եկն ի Մառի
Ի՛ նսպան գճորոս թագուորդի.
Եւ այլք բազումք ի Եռն զկնի
Ի՛ այրեց ըզՍիս և զՄսիս
Եւ զինչ որ չէն կայր ի միջի.
Եւ զԼեռն ասագ օրդի
Հեթմայ Հայոց մեծ աբֆայի
Տարաւ ծառայ լ՛նդ ի բանդի
Ի՛ քաղաքն Եգիպտոսի՛:

Քաղաքական կյանքի, պետականության կորուստներն ու հայողութունները, վայրէջքներն ու վերելքները հայոց բանաստեղծության մեջ իրենց քիչ թե շատ ճշգրիտ արտապատկերումը գտան շնորհիվ վիպասանութուն կոչված քերթվածների: Եթե Շնորհալու ստեղծագործության մեջ արտացոլվել են հայ պետականության վերահաստատման երազանքներն ու հույսերը, ապա Վահրամ Բարունին, տեսնելով այդ երազանքը իրականացած, ևրդեց հայոց նոր պետության հզորութունն ու փառքը: Եվ Ներսես Շնորհալու, Հեթում Երկրորդի ու Ամբաստանապետի երկերի շարքում կարևորագույն տեղ ունի Վահրամ Բարունու քերթվածը: Բարունին, որ ապրեց Կիլիկիայի հայոց պետականության ամենածաղկուն տարիներին, իր քաղաքացիական պարտքը կատարեց, ստեղծելով նրա կյանքի գեղարվեստական տարեգրութունը: Նշանավոր փիլիսոփային բացառիկ գեր ու բախտ էր վիճակված հայ բանաստեղծության մեջ:

Երբ սկսվում է քաղաքական անկման շրջանը, առատանում են նաև պատմաքաղաքական ողբերը: Եվ վիպասանութունը դառնում է հազվագյուտ, գուցե և ժամանակավրեպ երևույթ: Որովհետև իրականության մեջ չկար այն հոգը, իրական հիմքը, որ տրամադրեր բանաստեղծին վիպասանութուն հորինելու: Բայց ահա, 1590 թ. իր աշակերտներ Կիրակոս Այրարատեցու և Անանիա Նախավկայեցու խնդրանքով Սիմեոն Ապարանցիին գրում է «Շարագրութին հոմերական վիպասանութեամբ սակս Պահլավունեսացն զարմի և Մամիկոնեսացն սեռի ի սկզբանէ մինչև ցլխախճան՝ որդի զհարսն փոխանորդելով, ասացեալ ըսնի բարառականն նուօխայօրն Ղաղարու

11 Ղ. Ալիբաև, Եջվ. աշխ., էջ 72:

Փարպեցոյն» ծավալուն քերթվածը (հիշատակարանով հանդերձ՝ ավելի քան 2800 տող), որ նույնպէս համառոտ կոչվում է Վիպասանութիւն¹²,

Ինչպես ընդգրկած նյութով, նույնպէս և ժամանակով Ապարանցու Վիպասանութիւնը շատ ծավալուն է. պատմութիւնն սկսելով աշխարհի արարչագործութիւնից, բանաստեղծն այն հասցընում է մինչև է դարի երկրորդ կեսը, մինչև Զվարթնոց տաճարի կառուցումը Ներսէս Շինողի ձեռքով:

Այս երկը և՛ մտահղացմամբ, և՛ կատարումով ցույց է տալիս, որ Ապարանցին քաջատեղյակ է Ներսէս Շնորհալու ստեղծագործութիւնը և մանավանդ՝ համանուն վիպաքերթվածին. այստեղ ևս, ինչպէս Վահրամ Բարունու պարագային, կրկնվում են Շնորհալու որոշ արտահայտութիւններն ու կապող բառերը, հիշվում են Հոմերոսն ու իր հերոսները:

Բայց Ապարանցին ոչ միայն հետևում է Շնորհալուն, այլև հենց ինքը հիշում է նրա վիպաքերթվածը, նկատելով, թէ իր ստեղծագործութիւնը ոչ հազառում և ոչ կրկնում է մեծ նախորդին:

Այլ զմիջիէն ճամբուրեալ,
Որ յատաւեօրն չէ գրեալ.
Խուն ինչ խօսիւի ծայրաբաղեալ,
Որ ի նմանէ է մնացեալ... (89)

Ինչպէս նշված է քերթվածի խորագրում, բանաստեղծը ցանկացել է հայ ժողովրդի պատմութեան ետնախորքի վրա վիպել հատկապէս Պահլավունիների և Մամիկոնյանների հերոսական անցյալը, իր հայրենակիցներին միտթարելու և հուսովառելու՝ նախնիների սխրանքները վերհիշելով: Իրավացի է նրա երկերի հրատարակիչը, երբ գրում է, թէ Սիմեոն Ապարանցին օգտվելով առաջին հերթին Ղազար Փարպեցու, Անանուհի, Սեբեոսի, Ղևոնդ Երեցի և ուրիշների աշխատութիւններից, «դասական պատմագիրների լավագույն ավանդներով հորինած «Վիպասանութեամբ» նպատակ ուներ անցյալի հերոսական ու հայրենասիրական դրվագներով դաստիարակել իր ժամանակակիցներին»¹³, Նվ քանի որ բանաստեղծն օգտվել է այսօր մեզ անծանօթ ազբյուրներից ևս, նրա երկը նաև ազբյուրագիտական արժեք է ստանում:

Վիպասանութիւն բառի գործածութեան դեպքերը հնարավորութիւն են տալիս եզրակացնելու, որ Ապարանցին այդ բառը հասկանում է սոսկ պատմութեան իմաստով: Այստեղ հեղինակն աշխատել է պատմել այնպիսի դեպքեր, որոնք տեղ չեն գտել Շնորհալու քերթվածում: Այնուամենայնիվ, Ապարանցու Վիպասանութիւնն ինչ-ինչ հարցերում կրկնում է Շնորհալուն: Ըստ երևույթին իր պատմութեան ամբողջականութեան համար դա կարևոր, անխուսափելի էր: Մասնավորապէս այստեղ ևս խոսվում է Մեծորպ Մաշտոցի նախածնունդն ու ղեկավարած մշակութային հզոր շարժման մասին: Աստծու շնորհով գտնված հայոց այրուբներ, որ իմանալի թագ է, Մեծորպն օգտագործում է ժողովրդի բարօրութեան համար, գրեթէ նմիրում նաև հարեան ժողովուրդներին:

Հաճուց ճիւսթս պայծառ ծաղկեալ՝
Երից սեռից լուսաւորեալ: (99)

Ելնելով իր նպատակից, Ապարանցին չէր կարող չկրկնել Շնորհալու խոսքերը Մովսէս Խորենացու և Դավիթ Անհաղթի վերաբերյալ, խոսքեր, որ երիտասարդութեանը կարող էին գրականապէս լիքքավորել:

Սիմեոն Ապարանցու Վիպասանութիւնը հորինված է ուսմական գրչով, գեղեցիկ կտորներ հաճախ են հանդիպում: Նրա ամենամեծ արժանիքը հայրենասիրական ոգին է: Բանաստեղծը սիրով է պատմում Վարդանանց հերոսամարտի, Վահան Մամիկոնյանի կոխման մասին, շարժաբերում Սեբեոսի Պատմութեան՝ Սմբատ Բագրատունու սխրագործութիւնների վերաբերյալ հաղորդումը և այլն: Նրա սիրտը թրթրում է իր պատուով ընթացքին համեմատ: Առանձնապէս ցավ է պատճառում հեղինակին հայրենի պետականութեան կորուստը:

¹² Սիմեոն Ապարանցի, Բանաստեղծութիւններ, Աշխատասիրութեամբ կարապետ Սուքիասյանի, Եր., 1976, էջ 79—173:

¹³ Անդ, էջ 31: Ապարանցու ազբյուրների մասին տե՛ս էջ 34, ինչպէս և՛ Կ. Սուխասյան, Սիմեոն Ապարանցու Վիպասանութեան ազբյուրները. «Վրաբեր» հաս. գիտ., 1970, № 8, էջ 30—38:

Բառձեալ գրագն ի յօծելոցս,
Նդեալ ի գլուխն օտարտիճն.
Առեալ գաշխարհս մեք սեփակեմ,
Մեզ ճիւր եղեալ ըստ Սազմասին: (147)

Հստ երևութիւն աճելի ծավալուն է Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակրի (+1749) Վիպասանութունը, նույնպէս գրված Շնորհալու ակնհայտ հետևողութեամբ, եալ հանգով¹⁴, 1100 տողից աճելի է Մարտիրոս Ղրիմեցու «Կարգ և թիւ թագաւորացն Հայոց» պատմական լափածո աշխատութունը, որից է. Դյուլորիին հրատարակել է շուրջ 100 տող¹⁵, Կիլիկիայի Հայոց թագավորութեանը վերաբերող հատվածը, սկսած Բագրատունյաց անկումից: Այս և մյուս այսպիսի բերթվածները դուրս են մեզ հետաքրքրող շրջանակներից, ուստի դրանց անդրադառնալը մեզ հետուս կտանի:

Վիպասանութունն իբրև միջնադարյան քերթվածի տարատեսակներից մեկը, աչքի է ընկնում անհամեմատ մեծ ընդգրկումով: Դա լայն կտավի գործ է, ուր պատկերվում է հայ ժողովրդի պատմութեան ամբողջ մի դարաշրջան կամ նույնիսկ դարաշրջաններ, և այդ համապատկերում հեղինակը հատկապէս առանձնացնում է ամենից աճելի աչքի ընկնող հերոսներին, որոնք ոչ միայն բախտորոշ դեր են կատարել հայրենի երկրի պատմութեան ճակատագրական պահերին, այլև կարևոր կերպարներ են նոր սերնդի դաստիարակութեան խնդիրների տեսանկյունից, մի հանգամանք, որ բնավ երկրորդական չէր ո՛չ Ներսես Շնորհալու, և ոչ հետագա դարերի բանաստեղծների համար:

Ներսես Շնորհալու Վիպասանութեան մեջ այդպիսի կերպարներ են Տրդատ Մեծը և Մեսրոպ Մաշտոցը, Վահրամ Բաբունու քերթվածում՝ Առն Մեծագործը, Սիմեոն Ապարանցու վիպաքերթվածում՝ Վարդան և Վահան Մամիկոնյանները, Սմբատ Բագրատունին, Հեթում թագավորի լափարներութունը այնպիսի մի ժամանակահատված է ընդգրկում, երբ առաջակարգ նշանակութեան ունեցող զինական հաջողութեաներ կամ այլ իրադարձութեաներ չեն եղել, ուստի նրա երկի կշիռը նույնպէս պակաս նշանակալից է: Ըվ միանգամայն բնական էր, որ ձեռագիր ժողովածուներում իբրև ինքնակա բանաստեղծութուն են հանդես գալիս Շնորհալու Վիպասանութեան՝ Գրիգոր Լուսավորչին, Մեսրոպ Մաշտոցին, Վարդան Մամիկոնյանին նվիրված հատվածները, որոնց մասին խոսք եղավ վերևում:

Բայց միջնադարյան հայ բանաստեղծները գրել են նաև անհամեմատ փոքր ծավալի հերոսական վիպաքերթ, ուր ներկայացվում են այս կամ այն հերոսի սխրանքները (Հովհաննես Քլկուրանցու՝ ասպետ իրպարիտին վերաբերող տաղը, Հովասափ Սեբաստացու «ՕՐհնեալ անուն արարական» և «ՍՄ՛»-ը աշխարհի Հայոց Մեծին» գողտրիկ վիպաքերթվածները և այլն), տարփողվում է նրանց հերոսութունը, հայրենասիրութունը:

Բոլոր այս վիպաքերթը գրված են ժամանակի առաջավոր մտավորականների ձեռքով և՛ իբրև անմիջական արձագանք հենց հեղինակների ապրած օրերի ամենահրատապ խնդիրների: Դրանց պաթոսը բարձր հայրենասիրութունն է, անձնագոհութունը հանուն ազատ ու անկախ հայրենիքի, Հերոսական վիպաքերթ, որ սկզբնավորվեց ժՐ դարում, փաստորեն հակոտնյան է պատմագրաբանական ողբերի և իր զարգացման փուլերով մեծ մասամբ համապատասխանում է երկրի քաղաքական պատմութեան վերելքների ու վայրէջքների կտրագծին և կոչված էր լավի, բարու, դրականի, հերոսականի օրինակով դաստիարակելու և ոգեպնդելու սերունդներին, վառ պահելու նրանց մեջ ազգային ոգին: Այս ստեղծագործութեաների նյութով է կանխորոշված ու պայմանավորված նրանց քացառապէս վիպական, պատմողական բնույթը: Կարճատև եղավ այն դարաշրջանը, երբ հայ բանաստեղծները կարող էին երգել հայրենի պետութեան հզորութունը: Կիլիկիան հայոց թագավորութեան վերացումից հետո գրված պատմագրաբանական վիպաքերթվածները արդեն գրվում էին ազատագրական որոշումների, անցյալ փառքը վերականգնելու երա-

¹⁴ Այս անտիպ ստեղծագործութեանից որոշ հատվածներ տպագրված են Ն. Ակինյանի «Բազելի պարտքը. 1500—1704» աշխատութեան մեջ (Վիեննա, 1952, 264—266, 340—344): Գրիգոր Շղթայակրի մասին տե՛ս 2. Անատայան, Գրական նմուշներ Գրիգոր Շղթայակրից. «Էջմիածին», 1950, ք. Գ—Դ, էջ 30—46 և «Բազմաձեպ», 1980, ք. 1—4, էջ 290—294:

¹⁵ Տե՛ս «Recueil des historiens des croisades publié par soins de l'Academie des Inscriptions et belles-lettres. Documents arméniens», tome premier, Paris, MDCCCLXIX (1869), էջ 684—687: Տե՛ս նաև Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Եր., 1958, էջ 42—45, «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Եր., 1941, էջ 212—213: Ղ. Արիշանը «Վիպասանութեան նկրտական» է անվանել անծանոթ հեղինակի քերթվածը (ԿԱՄԵՆԻՑ, Վենետ. 1896, էջ 202—214):

զանքի թելադրությամբ, և Ա. Մարտիրոսյանի՝ Մարտիրոս Ղրիմեցու քերթվածի առթիվ արած դիտողութիւնը ըստ էութեան վերաբերում է նաև այս միութեանը։ Նրանց գործերը «արթնացող ազգային գիտակցութեան» ծնունդն ու արտահայտութեան են¹⁶։ Դրա վկայութիւնն է ուշ միջնադարյան հեղինակի խոսքը, որով շեշտվում էր պատմութեան դասերի կարևորութիւնը սերունդների համար («Պատմութիւնը կյանքի ուսուցիչ է», — ասել է Կիկերոնը) և իր իսկ երկի նպատակը։

... Ուզգաշախիզ նախնեաց մեր վէպ
Եւ օրինակ մեզ անվրէպի¹⁷։

Ուշ միայն Մարտիրոս Ղրիմեցին, այլ նաև նրա նախորդները անհրաժեշտ էին համարում պատմահայրենասիրական քերթվածները և հավատում էին, որ դրանք կարևոր դեր ունենին կատարելու հայոց նորովի խմորվող հասարակական կյանքում։ Իսկ պատմաքաղաքական այս պոեմների առաջնեկը՝ Ներսես Շնորհալու Վիպասանութիւնը, կարծես ներշնչված լինի քերթողահայր Խորենացու ծրագրային խոսքով, որը պատշաճ քնարան կծառայեր այս կարգի քերթվածներին. «Ջի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոյժ անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհոս, և արժանի գրոյ յիշատակի» (Խոր. Ա, գ)։

А. Г. МАДОЯН — Армянская средневековая историко-политическая поэма. — Статья посвящена одному из видов средневековой поэмы XII—XVI вв., первым образцом которой является «Повествование на Гомеровский лад...» Шнорали, где он обещает представить историю своих предков как она есть, не прибавляя и не убавляя, чтобы юный читатель смог увидеть, чего нельзя делать, что возбраняется. Ваграм Рабуни, продолживший по просьбе Левона III стихотворную историю Шнорали, пересматривает этот принцип, считая, что нет необходимости говорить о дурных деяниях. Попытку поэтизации истории делали и царь Гетум II, Смбат Гундстабль и Симеон Апаранци. События политической жизни, утрата и обретение государственности, взлеты и падения национального самосознания в армянской поэзии нашли более или менее достоверное отражение благодаря рифмованным историям. Если в произведении Шнорали выразились надежды и мечты автора о восстановлении армянского государства, то Ваграм Рабуни воспевает могущество Киликийского государства. Средневековые армянские поэты писали и сравнительно меньшего объема героические поэмы, изображающие подвиги того или иного исторического лица, восхваляющие их самоотверженность и патриотизм (Ованнес Глуранци, Овасап Себастиани).

¹⁶ Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 43։

¹⁷ Նույն տեղում։